Հավելված N 3

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Կապանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Կապան համայնքի Համլետավան թաղամաս տանող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ՍՄԿՀ-ԲՄԱՇՁԲ-25/10 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի նոյեմբերի 12-ին կնքված N ՀՀ-ՍՄԿՀ-ԲՄԱՇՁԲ-25/10 ծածկագրով գնման պայմանագրում 2026 թվականի մայիսի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 պայմանագրի վերջնաժամկետի փոփոխություն

Փոփոխության առաջացման պատճառ N 2 ֆինանսական միջոցների նախատեսում

Փոփոխության նկարագրություն N 1 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում, համաձայնագրի կնքում

Փոփոխության նկարագրություն N 2 Վճարման ժամանակացույցի հաստատում, համաձայնագրի կնքում

Փոփոխության հիմնավորում Գնումների մասին ՀՀ օրենսդրություն, ՀՀ կառավարության 2026թվականի փետրվարի 12-ի թիվ 142-Ա որոշում, Պայմանագրի 8.5, 8.16 կետեր

Պատվիրատու՝ Կապանի համայնքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

Կապան համայնքի Համլետավան թաղամաս տանող ճանապարհի
ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման
2025թ. նոյեմբերի 12-ին կնքված N <<ՀՀ-ՍՄԿՀ-ԲՄԱՇՁԲ-25/10>>

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Կապան «22» մայիս 2026թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Աժդանակ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Մկրտչյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համաձայն Հայաստանի Հանրապետության 2026թվականի փետրվարի 12-ի N 142-Ա որոշման, հիմք ընդունելով 12.11.2025թ. կնքված <<ՀՀ-ՍՄԿՀ-ԲՄԱՇՁԲ-25/10>> ծածկագրով պայմանագրի 8.5 և 8.16 կետերը և, հաշվի առնելով ֆինանսական միջոցների նախատեսումը, կողմերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար սուբվենցիայի մասնաբաժնի ընդհանուր գումարը սահմանել 85068500 (ութսունհինգ միլիոն վաթսունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Հաստատել սույն Համաձայնագրի վճարման ժամանակացույցը սուբվենցիայի մասնաբաժնի 85068500 (ութսունհինգ միլիոն վաթսունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարով՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 Հավելվածի:

1.3 Փոփոխել Պայմանագրի գործողության վերջնաժամետը՝ նոր վերջնաժամկետ սահմանելով 2026 թվականի դեկտեմբերի 30-ը:

1.4 Պայմանագրի Օրացուցային գրաֆիկը/Հավելված 2/ և Պայմանագրի Համաձայնագիր N 1-ի վճարման ժամանակացույցը/Հավելված 1/՝ ընդունել համաձայն սույն Համաձայնագրի 1.3 կետով սահմանված փոփոխության:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.3 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով սահմանված դրույթները, կողմերի ստանձնած իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1 հավելվածը, համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի համայնքապետարան	<<Աժդանակ>> ՍՊԸ
Ք. Կապան, Չարենցի 1	Սյունիքի մարզ, Լեռնաձոր,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բարիկավան թաղ. փ., 1/1,
ՀՀ 900312512040 համայնք	Արդշինբանկ ԲԲԸ Կապան մ/ճ
ՀՀ 900312000491 սուբվենցիա	ՀՀ 24708055366900000
ՀՎՀՀ 09426088	ՀՎՀՀ 09425679
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«12» նոյեմբեր 2025թ. կնքված
<<ՀՀ-ՍՄԿՀ-ԲՄԱՇՁԲ-25/10>> ծածկագրով պայմանագրի
« 22 » մայիս 2026թ. Կնքված N 2 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231187-525	Կապան համայնքի Համլետավան թաղամաս տանող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ					85068500	85068500	85068500	85068500	85068500	85068500	85068500	85068500	85068500

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կապանի համայնքապետարան
Ք. Կապան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040 համայնք
ՀՀ 900312000491 սուբվենցիա
ՀՎՀՀ 09426088

_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Աժդանակ>> ՍՊԸ
Սյունիքի մարզ, Լեռնաձոր,
Բարիկավան թաղ. փ., 1/1,
Արդշինբանկ ԲԲԸ Կապան մ/ճ
ՀՀ 2470805536690000
ՀՎՀՀ 09425679

_____
/ստորագրություն/
Կ.Տ